

Մամլոյ Հաղորդագրութիւն՝

Բաքթա քաղաքի ոմակոծման դատապարտութեան շուրջ

Լուրեր կը հաղորդուին թէ՛ Բաքթա քաղաքը ենթարկուած է հրթիռարձակումներու միջազգային դաշինքի օդանաւներուն և Սուրիոյ վարչակարգի օդանաւներուն կողմէ, որուն հետեւանքով մեծ զոհեր արձանագրուեցան անմեղ քաղաքացիներուն մէջ, մօտ հարիւրաւոր նահատակներ և վիրաւորներ:

Ազգային Համակարգող Մարմինը կը նշմարէ թէ՛ ահաբեկչական և քաւչական խմբաւորութիւններուն դիմադրելը, չի նշանակեր որեւէ կերպով անմեղ քաղաքացիներուն կեանքը վտանգի ենթարկել: Համակարգող մարմինը կը դատապարտէ թիրախ դարձնել քաղաքացիները՝ կործանել իրենց տուներն ու կալուածները, և կը պահանջէ դադրեցնել անխնայ ոմբակոծումը քաղաքներուն ու բնակութեան թաղամասերուն, ինչպէս նաև կոչ կ'ուղղէ Սուրիոյ հարցին հետ կապակցութիւն ունեցող բոլոր կողմերը, որպէսզի աշխատին լրջօրէն քաղաքական լուծում գտնելու, որուն նպատակն է դադրեցնել սպաննութեան և քանդումի գործողութիւնները, որուն զոհ կ'երթայ մեր ժողովուրդէն անմեղ հոգիներ, և ան է լուծումը, որ կը բանայ ուղին ժողովրդավրակական ազգային փոփոխութեան:

Ողորմութիւն նահատակներուն հոգիներուն և շտապ ապաքինում վիրաւորներուն

Ազգային Համակարգող Մարմնի տեղեկատուութեան գրասենեակի նախագահ -
27/11/2014